

պարանոց յամառութեամբ կը շարունակուի, առանց յուսոյ մեծաւոր խաղաղութեան: Ստոյգ է թէ Անգղիա իր եռամսայ զինուց անյաջողութենէն ստիպեալ այժմ ակելի մէտ կը ցուցնէ ինք զինքը խաղաղութեամբ արհմահեղ պատերազմին վերջ տալու, սակայն ինչպէս կարելի է զայն ենթադրել, երբ դուրսած պայմաններն ինքնին հարաւ - Ափրիկեան պատերազմին առաջին ու զլիսաւոր շարժառիթներն եղած են: Գաղթականութեանց պաշտօնեայն՝ Չէմբըլէն կը պահանջէ որ Բուրերն իրենց պարտութիւնը խոստովանելով՝ գէնընկէց ըլլան: Սակայն այս տեսակ անմիտ պայմանի մը Բուրերու կողմանէ տալի արձագանգն ակնյայտնի կը տեսնուի...: »Nederlansd'ի մէկ թղթակիցը Պրետորիայէ հետեւեալը կը գրէ իբր պատասխան վերոյիշեալ պահանջին. «Մեր բացարձակ անկախութիւնը տուժելով՝ խաղաղութիւն մ'երբեք չենք ընդունիր: Այո, պատերազմը դեռ երկար, շատ երկար պիտի տեւէ, սակայն ազատութեան յուսով ոգեւորուած ենք ամէնքս եւ մինչեւ ցետտին շունչ կուտելու յօժար...»:

Անգղիացոց Տփիֆոնտէնի քով կրած պարտութեան վրայ հետեւեալ մանրամասն տեղեկութիւնն առինք. Դեպէտ շոգեկառքի զլիսաւոր կայարանին վրայ համարուած մեծաքանակ պաշարները ձեռք ձգել ուզելով, յանդուգն յարձակմամբ 600 հոգիէ բաղկացած անգղիական զուռըը շարաշար կը զարնէ: Անգղիացիք այս ընդհարման մէջ կը կորսնցընեն՝ 19 պաշտօնակալ մեռեալ եւ վիրաւոր, 240 զինուոր մեռեալ, 390 գերեալ, 3 թնդաթիթ, 67 կառք, 2000 հրացան եւ 150 կառք պաշար: — Այս մեծ յաղթութեան փոխարէն Բուրերն իրենց բաշ հրամանատարներէն մին եւս — զԳրուիցիմզէր կորսնցուցին, որ փորրիկ ընդհարման մը մէջ կարծիքը խոցուելով, թշնամեաց ձեռքն ինկաւ:

Հարաւ - Ամերիկայի խոտովութիւնք դեռ կը շարունակուին: Ամսոյս 21ին յեղափոխականաց «Պաղիլա», նաւը, որ պետական գնդին պաշտօնակալները պատրելու դիտմամբ սպիտակ ներկուած էր, առանց ճանչցուելու 300 մետր հեռաւորութեամբ կատավարութեան «Լատուարոյ նաւուն կը մերժենայ եւ կը սկսի յանկարծ զնդա-

կոծել: Պետական նաւն իր աննպաստ դրից պատճառաւ չկարենալով առաջափողման թնդանթները գործածել, տեղի տալ կը ստիպուի «Պաղիլայ»: Յեղափոխականաց Պանամայի վրայ յարձակելու ծրագիրը բուրոյվին ի դերեւ ելաւ, մասն զի Միաց. Նահանգաց նաւուն հրամանատարը զայն կը պաշտպանէր:

Դանիմարկիա քաւական ժամանակէ ի վեր Միացեալ Նահանգաց հետ սակարկութիւն կ'ընէ Անտիլանց մէջ ունեցած երեք փորրիկ — Ս. Թովմաս, Ս. Դաւալ եւ Ս. Յովնանէս (քն. 40.000) կղզիները ծախելու համար: Այս խնդիրը սակայն ի Դանիմարկա մեծ յուզում պատճառեց ժողովրդեան եւ խորհրդարանին մէջ: Ծախելու հակառակող կողմակցութիւնը՝ Զրիստիան թագաւորին 34 տարի յառաջ տարած խոստման վրայ յեցեալ, կը պահանջէ որ ծախուելի կղզեաց բնակիչներուն եւս խորհուրդ հարցուի: — Ետտ խնդրական է որ Միացեալ Նահանգք յանձն առնուն զնել այն կղզիները, որոնց բնակիչք արդէն երբեմն ուզած էին Միաց. Նահանգաց մասն ըլլալ:

ԲՈՎԱՆ ԳԱՎՈՒԹԻՒՆ

ՌԻՍՈՒՄՆԱԿՆ

- Թ.Պ.ՅԵՑԹՈՒԹԻՒՆ — Գրական Թղթակցութիւն Գ. Գ.Ուոյլ յայ մամուլը. 33:
- ԳՐԱՆՆԵՐ — Ալեքսանդր Գոպ փորձ մը ընմաստերութեան վրայ. 37:
- ԿՆՆՍԱԳՐԱՆՆԵՐ — Թիշէ Դոկտ. Նահապետ Ռուսինեան. 40:
- ՆՇՆԱՐԱՅՐԱԳՐԱՆՆԵՐ — Հայաստան, Զրդաստան եւ արեւմտեան Պարսկաստան քաղաքական-ստորեւտանայ սեպագրերու համաձայն. 43:
- ԼԵՃՈՒԱՐԱՆՆԵՐ — Արաքիկի գաւառաբարբառը. 48:
- ՊԱՏՄԱԿԱՆ — Նիդաքեթուպոլիս քաղաք ու ազգայնք 1848 եւ 1849ին յեղափոխութեան ատեն. 54:
- ՄԱՏՆԱՅՐԱՆՆԵՐ — Սրբոց սահակայ Կաթող. եւ Մտորդակ. Վարդապետի ձեռնաստուն ու ներքալու աշակերտք եւ առաջին թարգմանիչք Ե. զարուս. 68:

ՍԵԼԵՆՍԵ

- ԺԱՆԿԵՓՈՒՆՉ — 1. Թուղթ երկնառաք. — 2. «Լոյս», կիսամսեայ թերթ մըն աւ. — 3. Օգտակար, եւ շատ օգտակար ընկերութիւնք. — 4. Ռուսլոքի հայկ. Ընթերցարանի տաննամակալ. — 5. Նունէ (Ս.) Վրաց Լուստիւթի Թէ սիրտու. 62:

ՔԱՂԱՑՔԱԿԱՆ ՌԻՍՈՒԹԻՒՆ 63:
 ՀՐԱՏԱՅՐԱՎՈՅ ԵՒ ՊԱՏՆԱՅՐԱՆՏՈՒ ՆՍՄԱՅՐՈՒ
Հ. ԱՌՓԱՅԵԼ Կ. ԳԱՐՈՆՉ
 Վ Ի Ե Ն Ե Ն, Ռ Ի Թ Ա Ր Ե Ա Ն Ե Գ Յ Ա Ր Ա Ն